Կին և քաղաքականությունը

2016 նոյեմբեր

Անվճար հավելված
www.WomenNet.am

Համայնքների խոշորացում. Նոր «ապակյա առաստաղ» կանանց համար

էջ 3

«Եթե ոչ ես, ապա՝ ո՞վ»

Լուսանկարում՝ Հերմինե Մկրտչյանը, Արմենուհի Վարդանյանը, Քրիստինա Մկրտչյանը

«Հայրենիքն ինձ համար սարն ու քարը չէ, հրապարակներն ու փողոցները չեն, Արարատն ու Սևանը չէ, հայրենիքն այն փոքրիկն է, ով ծնողների ձեռքը բռնած՝ հեռանում է Հայաստանից, կտրվում իր արմատներից... Հեռանում է մեր բոլորի ապագան: Ես չեմ ուզում հեռանալ, ես ուզում եմ պայքարել՝ հանուն դեռ չարտագաղթած «հայրենիքի»: Եթե ոչ ես, ապա՝ ո՞վ. այսպես ենք մտածել՝ մասնակցության որոշում կայացնելուց առաջ»,- ասում է ԳԱԼԱ հեռուստաընկերության լրագրող Արմենուհի Վարդանյանը, ով իր համախոհների հետ հոկտեմբերի 2-ին մասնակցել է Գյումրու ավագանու ընտրություններին ԳԱԼԱ կուսակցության համամասնական ցուցակով: Ի դեպ, Գյումրու և Վանաձորի ավագանու ընտրությունները հետաքրքիր օրինաչափություն բացահայտեցին. կուսակցություններից շատը ներկայացան իրենց երիտասարդական թիմերով, որոնց համար «Եթե ոչ ես, ապա՝ ո՞վ» հարցադրումը կենսակերպ է...

Ստորաստեղծ քաղաքական ուժի՝ «Գաղափարակից լիբերալների ալյանս» կուսակցության՝ ԳԱԼԱ-ի ընտրական ցուցակում ընդգրկված 22 թեկնածուներից 7-ը, այսինքն՝ 32%-ը կանայք էին: Առաջին տասնյակում երեք կին թեկնածու կար. 3-րդ հորիզոնականում՝ Քրիստինա Մկրտչյանը, ով Galatv.am կայքի գլխավոր խմբագիրն է, 5-րդ հորիզոնականում՝ Արմենուհի Վարդանյանը և 7-րդ հորիզոնականում՝ Հերմինե Մկրտչյանը: Երեքն էլ անկախության հասակակիցներ են, լրագրող, ԳԱԼԱ կուսակցության և «Թիմ ռեսուրս» քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ անդամ:

Ինչպես մեզ հետ զրույցում նշեց Արմենուհի Վարդանյանը, կանանց ներկայացվածությունն իրենց ցուցակում ամենևին էլ տուրք չէ օրենքի պահանջին, որովհետև կանայք իսկապես բավականին ակտիվ են իրենց կուսակցությունում և լավ ճանաչված Գյումրիում իրենց լրագրողական ու հասարակական գործունեության շնորհիվ: Գյումրեցիները նրանց տեսնելով հաճախ ասում են՝ ԳԱԼԱ-ի աղջիկները:

«Եվ մենք հպարտ ենք, որ այս արտահայտությունը զուգորդվում է վճռականության, համարձակության, սկզբունքայնության հետ»,- ժպտալով պարզաբանեց մեր զրուցակիցը:

«Մեր թիմում միշտ էլ կանայք ունեն առանձնահատուկ դեր և նշանակություն, և անհամեստ չի լինի, եթե ասեմ, որ Գյումրիում գրեթե բոլորն են ճանաչում ԳԱԼԱ-ի աղջիկներին: Ճանաչում են, քանի որ տարբեր ժամանակահատվածներում մեր թիմի կանայք աչքի են ընկել իրենց պայքարող տեսակով, ու մեր կին թեկնածուներից յուրաքանչյուրն առանձնանում է իր գործելաոճով»,- հավելեց Հերմինե Մկրտչյանը:

Ընտրությունների արդյունքներով ԳԱԼԱ-ն 4 մանդատ ստացավ, և ավագանու անդամ դառնալու հնարավորությունը ըստ ցուցակի ընձեռվեց միայն կուսակցության վարչության անդամ Քրիստինա Մկրտչյանին: Սակայն այսօր ԳԱԼԱ կուսակցությունը բոյկոտում է Գյումրու ավագանու նիստերը մինչև դատական գործընթացի ավարտը՝ այդկերպ բողոքարկելով ընտրություններից հետո տեղի ունեցած մանդատների բաշխման կարգը: Հիշեցնենք, որ Գյումրու ավագանու ընտրությունները կանոնակարգող թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը նախնական 15-ի փոխարեն բոնուսային ևս 2 մանդատ շնորհեց «Բալասանյան դաշինքին» և դրանով իսկ քաղաքապետ ընտրելու իրավունք տվեց: Մեզ հետ զրույցում Քրիստինա Մկրտչյանն ասաց, որ առայժմ նպատակահարմար չեն համարում վերցնել իրենց հասանելիք մանդատներն ու մասնակցել ավագանու նիստերին՝ լեգիտիմացնելով տեղի ունեցածը:

Հարցին՝ մտավախություն արդյոք չունե՞ն, որ ընտրողները, որոնք վստահության քվե են տվել ԳԱԼԱ-ին և հույսեր կապել նրա հետ, կարող են հիասթափվել մանդատ չվերցնելու և ավագանու նիստերին չմասնակցելու իրենց որոշումից, Քրիստինան ասաց, որ երկար են մտածել այդ հարցադրման շուրջ.

«Իրականում ունեինք նման մտավախություն, կուսակցությունում այդ հարցը քննարկվել է, ինչ-որ տեղ նաև տարաձայնություններ կային, քանի որ մտածում էինք՝ իսկապես ճի՞շտ ենք վարվում, թե՞ ոչ: Այնուամենայնիվ գտնում ենք, որ մեր ընտրողների համար էլ գերակա է այն պայքարը, որը այսօր տանում ենք տեղի ունեցած անարդարության դեմ, ինչի արդյունքում քաղաքապետը, ըստ էության, ապօրինի նշանակվեց: Մեր բոյկոտը հավերժ չէ, այլ մինչև դատական գործընթացների ավարտը: Այս ընթացքում նաև աշխատում ենք որպես ավագանու անդամ քաղաքացիների հետ՝ ընդունում ենք նրանց, հայտարարությունն այդ մասին պարբերաբար հեռուստաընկերությամբ գնում է, քաղաքացիները գալիս են ԳԱԼԱ կուսակցության գրասենյակ, մշտապես կապի մեջ ենք մեր ընտրողների հետ»,- ասաց նա, հավաստիացնելով, որ անկախ նրանից՝ այս պահին մանդատը վերցրել են, թե ոչ, իրենք քաղաքացու կողքին են...

ՏԻՄ համակարգը 20 տարեկան է

Այս տարի տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանում նշեց իր 20-ամյակը. առաջին անգամ ՏԻՄ ընտրություններն անցկացվել են 1996-ի նոյեմբերի 10-ին: Համակարգը դեռևս զարգացման փուլում է, անելիքներ շատ կան, կայացածության ցուցանիշներից մեկն էլ կանանց մասնակցությունն է տեղական որոշումների ընդունման մակարդակում:

ՏԻՄ-երի գոյության 20 տարվա ընթացքում կանանց թիվը համայնքների ղեկավարների թվում գրեթե չի փոխվել՝ տարիներ շարունակ մնալով 2%-ի սահմաններում: Այդ նույն ժամանակահատվածում կանանց թիվը ավագանիների կազմում գրեթե կրկնակի աճել է, սակայն այն շարունակում է շատ ցածր մնալ՝ կազմելով ընդամենը 11,7%: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տվյալներով՝ ներկայումս Հայաստանի 793 համայնքներում գործում են 5368 ավագանու անդամներ, որից 633-ը կանայք են:



Փաստաշար

ՏԻՄ-2016. Հաջողության գործակից

ՀՀ ԿԸՀ տվյալներով՝ հանրապետության 10 մարզի 690 համայնքում սեպտեմբերի 18-ին և հոկտեմբերի 2-ին կայացած ՏԻՄ ընտրություններում առաջադրված 5706 ավագանու թեկնածուներից 674-ը կանայք էին, նրանցից 497-ն ընտրվել են: Ավագանիների ընտրված անդամների ընդհանուր թվում կանայք կազմում են 11,5%, ինչը 2%-ով ավելի է նախորդ ընտրությունների արդյունքներից: 2016-ի ընտրություններում կին ավագանիների թիվը գրեթե կրկնակի աճել է Արարատում և Արագածոտնում, սակայն զգալի նվազել Գեղարքունիքում, Շիրակում և Վայոց ձորում:

Այսօր կանայք 17 համայնք են ղեկավարում

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տվյալներով՝ կանայք ղեկավարում են.

Արարատի մարզի՝ Վ. Դվին,
Արմավիրի մարզի՝ Արևաշատ և Արտամետ,
Գեղարքունիքի մարզի՝ Գեղաքար, Ծափաթաղ, Շատջրեք,
Լոռու մարզի՝ Բազում, Դաշտադեմ, Մեղվահովիտ, Պաղաղբյուր,
Կոտայքի մարզի՝ Նոր Երզնկա,
Շիրակի մարզի՝ Ախուրիկ, Ամասիա,
Սյունիքի մարզի՝ Հացավան, Շիկահող, Շրվենանց, Տորունիք համայնքները:

***

Հայաստանի երեք մարզում՝ Արագածոտնում, Տավուշում և Վայոց ձորում, կին համայնքի ղեկավարներ չկան:

***

Հանրապետության որևէ քաղաք կին չի ղեկավարում:

ՏԻՄ-երը ԵԱՀԿ երկրներում

2016 թ. տվյալներով՝ կանանց ներկայացվածության միջին ցուցանիշը ԵԱՀԿ երկրների տեղական ինքնակառավարման մարմիններում կազմում է 36%: Համայնքների ղեկավարների թվում կանայք կազմում են 5-25%. փաստում է «ԵԱՀԿ տարածաշրջանում կանանց քաղաքական առաջխաղացման լավագույն պրակտիկաները» զեկույցը: Նշենք, որ դեռևս 1999 թ. Եվրոպայի խորհրդի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը բանաձև ընդունեց, որը նախատեսում է ապահովել տեղական որոշումների կայացման մակարդակում կանանց և տղամարդկանց հավասարակշիռ ներկայացվածությունը:

Կանանց ձայնը

«Հենց կին գործիչները պետք է բարձրացնեն կանանց ներգրավվածության խնդիրը»

Կանայք միանշանակ մեծ դերակատարում ունեն մեր առօրյա կյանքում, բայց, ցավոք, անկախ իրենց պատրաստվածությունից նրանց տեղ չեն տալիս կառավարման օղակներում: Մինչդեռ կին ղեկավար ունենալը բավականին դրական ազդեցություն կունենա երկրի կամ առանձին վերցրած համայնքի կյանքում, քանի որ կինն ավելի սկզբունքային է, ավելի խիստ, բայց և ավելի արդար: Եվ այն երկիրը, որը կինն է ղեկավարում, միանշանակ ծաղկուն երկիր է դառնում: Ի վերջո, եթե Պակիստանի պես մահմեդական երկրում Բենազիր Բհուտտոն կարողացավ նախագահ լինել, ապա Հայաստանում պետք է ու կարող է լինել… բայց տղամարդիկ այդ ճանապարհը փակում են: Մինչդեռ ես համոզված եմ, որ կին ղեկավար ունենալով՝ երկրում առկա այս ծանր վիճակը կարող էր ավելի հեշտությամբ շտկվել:

Այծեմնիկ Օհանյան
Վանաձորի ավագանու
ԲՀԿ խմբակցության ղեկավար,
Վանաձորի բժշկական կենտրոնի բժիշկ

Դարկավոր է կանանց առաջընթացն ապահովող աշխատանք տանել կուսակցությունների ներսում: Ես դա իմ հասարակական գործունեության փորձից եմ ասում: Վանաձորի օրինակով զգացի, որ կուսակցությունները խնդիր ունեն իրենց ցուցակներում կանանց ներգրավվածության առումով: Իրականում նրանք պետք է ոչ միայն ընտրությունների նախաշեմին, այլ ավելի շուտ մտահոգվեն իրենց շարքերում կայացած, բանիմաց կանանց ներկայությունն ապահովելու հարցով: Այդպիսի կանանց պակաս Հայաստանում չկա, ու եթե նրանք կուսակցություններում չեն, ապա դա կուսակցությունների խնդիրն է:

Արմենուհի Կյուրեղյան
Վանաձորի ավագանու
ՀՅԴ խմբակցության անդամ,
ֆիզմաթ գիտությունների թեկնածու,
Համալսարանական կրթությամբ
կանանց ասոցիացիայի
Լոռու մարզային մասնաճյուղի ղեկավար

Կարծում եմ, որ հենց կին գործիչները, և կապ չունի՝ ո՛ր քաղաքական ուժն են ներկայացնում, պետք է բարձրացնեն կանանց ներգրավվածության խնդիրը: Կանանց ներուժը պետք է գնահատվի և որպես հավասարը հավասարի դիտարկվի: ՉԵՄ կարծում, որ այսօր Հայաստանում կանայք պատրաստ չեն, օրինակ՝ նախարար, գյուղապետ կամ քաղաքապետ լինել, պատրաստ են, սակայն տղամարդիկ դա չեն ուզում ընդունել: Այսօր Հայաստանում աշխատող կանանց զգալի մասն է իրենց ընտանիքները պահում: Մեր կանայք և՛ կիրթ են, և՛ տեսնում են այն խնդիրները, որոնք լուծման կարիք ունեն՝ սկսած ամենապարզ կենցաղային հարցերից: Այսօր մենք ունենք տնտեսապես թույլ, չզարգացած գյուղեր, որոնք ոտքի կանգնեցնելու համար կանանց ռեսուրսը պետք է օգտագործվի: Ես կարծում եմ, որ եթե մեր կուսակցություններում ավելի շատ կանայք լինեին, գուցե իրավիճակն այսքան վատը չլիներ, որովհետև կնոջ մտածելակերպն այլ է, նա միասնության ու համերաշխության է ձգտում, իսկ տղամարդկանց մոտ ռիսկայնությունն է ավելի բարձր: Թեև իշխանության համակարգում կոռուպցիոն ռիսկերը իրականում սահմաններ չունեն՝ կին թե տղամարդ, ընտրակեղծարարությունները տղամարդիկ հիմնականում կանանց ձեռքով են կատարում, այդուհանդերձ, կնոջ դերն իր համայնքի խնդիրների լուծման գործում անհրաժեշտություն է…

Կարինե Ղուկասյան
Վանաձորի ավագանու
«Լուսավոր Հայաստան» կուսակցության
խմբակցության անդամ,
«Հույս Հայաստանի համար»
բարեգործական կլինիկայի բժիշկ,
կաթնամթերքի արտադրության սեփականատեր

Համամասնական ընտրակարգ

Ինչպես աշխատեց քվոտան

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 2-ին հանրապետության երկու խոշոր քաղաքներում՝ Գյումրիում և Վանաձորում, ՏԻՄ ընտրություններն առաջին անգամ անցկացվեցին համամասնական ընտրակարգով: Ու թեև Գյումրիի դեպքում այսօր կարելի է խոսել միայն նախնական արդյունքների մասին, իսկ Վանաձորում ընդդիմությունը դեռ շարունակում է ավագանու նիստերի բոյկոտը, երկու քաղաքներում էլ կանանց ներկայացվածությունը ավագանիներում զգալիորեն աճել է՝ 5%-ից դառնալով 24%: Եթե նախորդ ընտրությունների արդյունքում Գյումրու և Վանաձորի ավագանիներում մեկական կին էր ընդգրկվել 21 անդամից, ապա այս անգամ ավագանու կազմում ընտրված 33 անդամից 8-ը կին են:

Դա հնարավոր է դարձել նոր Ընտրական օրենսգրքով սահմանված գենդերային քվոտայի շնորհիվ, ըստ որի առաջադրվող կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի 1-ին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով քառյակներում (1-4, 1-8, 1-12 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 75 տոկոսը:

Դիտարկելով, թե ինչպես է աշխատել քվոտան Գյումրիում և Վանաձորում առաջադրված կուսակցությունների ցուցակներում, նշենք, որ միջինում կուսակցությունների ցուցակների մեկ երրորդը կանայք էին:

Գյումրիի ավագանու ընտրություններին 11 կուսակցություն է մասնակցել, որոնց նախընտրական ցուցակներում ընդհանուր թվով 419 թեկնածու էր ներկայացված: Թեկնածուներից 128-ը կամ 30,5 %-ը կանայք էին: Գյումրիում առաջադրված 11 կուսակցությունների ցուցակներում կանանց նվազագույն ներկայացվածությունը 25% է («Բալասանյան դաշինք» և «Բարգավաճ Հայաստան»), իսկ առավելագույնը՝ 44 % («Գյումրեցու ոգի», «Գործարար»): Մյուս կուսակցությունները 30-33% կին են ներկայացրել իրենց ցուցակներում:

Ընդ որում, 11 կուսակցություններից 8-ը ներկայացրել են կին թեկնածուներին ցուցակի առաջին եռյակում, մնացած երեքը՝ 4-րդ համարից սկսած: Ցուցակներից միայն մեկն էր կին գլխավորում՝ Եպրաքսյա Մեխակյանը (ՀԱԿ): Կուսակցություններից 7-ը երեք կին էին ընդգրկել իրենց ցուցակների առաջին տասնյակում:

Վանաձորի ավագանու ընտրություններին 8 կուսակցություն է մասնակցել: Նրանց ընտրական ցուցակներում ընդհանուր թվով 326 թեկնածու էր ներկայացված, որոնցից 93-ը կամ 29%-ը կանայք էին: Կանանց ներկայացվածությունը տատանվում էր 25%-ից՝ իշխող ՀՀԿ-ի, «Բարգավաճ Հայաստանի» և «Լուսավոր Հայաստանի» դեպքում մինչև 33% «Համախմբում» և «Հայկական վերածնունդ» կուսակցությունների ցուցակներում: Մյուս կուսակցությունները 27-32%-ով էին ընդգրկել կանանց իրենց ցուցակներում: Ընդ որում, Վանաձորում առաջադրված կուսակցությունների կեսը ներկայացրել էր կին թեկնածուներին ցուցակի առաջին եռյակում, մյուս կեսը՝ 4-րդ համարից սկսած: Ցուցակներից միայն մեկն էր կին գլխավորում՝ Այծեմնիկ Օհանյանը ԲՀԿ-ից:

Ստացվում է, որ երկու դեպքում էլ կուսակցությունները կարողացան ապահովել իրենց ցուցակներում սեռերի 30/70 համամասնությունը, որը, ինչպես հայտնի է, նոր Ընտրական օրենսգրքով հետաձգված է մինչև 2021 թվականը: Ըստ էության, անցած ընտրություններն ապացուցեցին, որ այդ հետաձգումը արդարացված չէ, առավել ևս, եթե խոսքը խորհրդարանական ընտրությունների մասին է:

Տորընտիր ավագանի

Այս անգամ օրենքը հոգուս կանանց էր

Վանաձորում և Գյումրիում ընտրություններից հետո խմբակցությունների կազմավորման ժամանակ աշխատեց նոր Ընտրական օրենսգրքի առնվազն երկու դրույթ, որոնք կարգավորում են գենդերային քվոտայի պահպանումը մանդատների բաշխման ժամանակ, և որոնց կիրառման արդյունքում նույնիսկ ինքնաբացարկների պրակտիկան աշխատեց հօգուտ կանանց:

Այսպես, ընտրությունների արդյունքում Վանաձորի ավագանիում 5 կուսակցություն է ներկայացված. «Լուսավոր Հայաստանը» ստացել է 10 մանդատ, ԲՀԿ-ն՝ 3, «Հայկական վերածնունդը»՝ 5, ՀՀԿ-ն՝ 13, իսկ ՀՅԴ-ն՝ 2:

ՀՀԿ խմբակցության 13 անդամներից 3-ն են կին (13%). Գայանե Քալանթարյանը՝ «Լոռու մարզային հոգեբուժական դիսպանսեր» ՊՓԲԸ տնօրեն, ՀՀԿ Լոռու տարածքային կազմակերպության կազմակերպիչ Մարինե Հովհաննիսյանը և երիտասարդ Սոխակ Մելքոնյանը: Ուշագրավն այն է, որ վերջինս ՀՀԿ ցուցակում 24-րդ հորիզոնականում էր ներկայացված, և նրանից առաջ դեռ 4 կին թեկնածու կար, սակայն կուսակցությունը հօգուտ նրա որոշում կայացրեց: Այստեղ է, որ աշխատեց Ընտրական օրենսգրքի դրույթը, ըստ որի երաշխավորվում է քվոտայի պահպանումը ընտրություններից հետո՝ մանդատից հրաժարվելու դեպքում: Մասնավորապես, եթե ինքնաբացարկի արդյունքում տվյալ խմբակցության որևէ սեռի ներկայացուցիչների թիվը նվազում է և արդյունքում ցածր է լինելու 20 տոկոսից, ապա մանդատը տրվում է այդ կուսակցության ընտրական ցուցակի նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին: Այդ դրույթը, ըստ էության, ապահովեց, որ կանանց ինքնաբացարկների դեպքում նրանց փոխարինի կին թեկնածուն և ոչ թե տղամարդը, ինչպես եղել է նախկինում:

> «Մենք՝ կանայք, պետք է կարողանանք չեզոքացնել լարված հարաբերություններով սկսված ավագանու գործունեությունը, համոզված եմ, որ դա մեզ կհաջողվի: Ես կներդնեմ նաև հոգեբանի իմ մասնագիտության ողջ կարողությունը: Գործը չպետք է տուժի, ես այդպես եմ կարծում, և չի տուժի:
>
> **Գայանե Քալանթարյան**
> Վանաձորի ավագանու ՀՀԿ խմբակցության անդամ

«Լուսավոր Հայաստան» խմբակցությունում 10 անդամից երկուսն են կին (20%)՝ Կարինե Ղուկասյանը և Անահիտ Կարապետյանը: Նշենք, որ խմբակցության նիստում վերջինս՝ Անահիտ Կարապետյանը, ընտրվել է խմբակցության քարտուղար:

«Հայկական վերածնունդ» խմբակցությունում 5 անդամներից միայն մեկն է կին (20%)՝ մանդատը բաժին է հասել «Աջակցություն հոի կանանց» ծրագրի սոցիալական աշխատող Մերի Եղիազարյանին:

«Բարգավաճ Հայաստան» խմբակցությունում 3 անդամից միայն մեկն է կին (33%)՝ կուսակցության ընտրական ցուցակը գլխավորող Այծեմնիկ Օհանյանը:

ՀՅԴ խմբակցությունն ավագանիում կունենա ընդամենը երկու անդամ, որից մեկը՝ կին (50%): Կուսակցության որոշմամբ՝ մանդատը տրվել է ՎՊՀ, դոցենտ Արմենուհի Կյուրեղյանին: Ի սկզբանե Արմինե Կյուրեղյանը երրորդն էր կուսակցության ցուցակում, սակայն ՀՅ նոր Ընտրական օրենսգրքի պահանջով կուսակցությունը պարտավոր է իր խմբակցության կազմում երկու սեռի ներկայացուցիչներ ապահովել:

Մասնավորապես, նոր Ընտրական օրենսգրքի 114-րդ հոդվածի 6-րդ կետում նշված է. «Ընտրական ցուցակից ընտրվում է այն թեկնածուն, որի հերթական համարն ընտրական ցուցակում փոքր կամ հավասար է տվյալ ընտրական ցուցակին հասանելիք մանդատների թվին: Եթե դրա արդյունքում կուսակցության (կուսակցությունների դաշինքի) բոլոր մանդատները բաժին են հասնում նույն սեռի ներկայացուցիչներին, ապա ցուցակի հերթականությամբ վերջին ընտրվածի մանդատը տրվում է ընտրական ցուցակի չներկայացված սեռի նվազագույն համարով թեկնածուին, եթե կա»:

Գյումրիում, ինչպես հայտնի է, ավագանին կիսով չափ է ձևավորվել, ընդդիմությունը մանդատները չի վերցրել, բողոքարկելով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը, ըստ որի 17 մանդատ տրվեց **«Բալասանյան դաշինքին»**, 8 մանդատ՝ **«Բարգավաճ Հայաստան»** կուսակցությանը, 4-ական մանդատ՝ **«Հայկական վերածնունդ»** և **ԳԱԼԱ** կուսակցություններին:

Այժմ պատկերը կանանց ներկայացվածության առումով հստակ է միայն «Բալասանյան դաշինքի» խմբակցության մասով, որի կազմում այսօր ներկայացված է 4 կին՝ ՀՀԿ-ական Լոլա Խաչատրյանը, անկուսակցական Լուսինե Սանոյանը, Գայանե Սարգսյանն ու ՀԲԴՄ անդամ Կարինե Թաքարյանը:

Մնացած կուսակցությունների կազմում ըստ նախնական արդյունքների կլինեն ընդհանուր թվով 4 կին: «Բարգավաճ Հայաստանը» ավագանիում կունենա 2 կին՝ ԲՀԿ-ական անդամներ Սուսաննա Աստոյան և Արմենուհի Մխիթարյան: «Հայկական վերածնունդը» ավագանիում կներկայացնի միայն մեկ կին՝ ԵԿՏԱ Գյումրու մասնաճյուղի ռեկտոր Հասմիկ Եղիազարյանը: ԳԱԼԱ կուսակցության խմբակցությունում ևս ընդամենը մեկ կին ավագանի կլինի՝ Քրիստինա Մկրտչյանը:

Համայնքների խոշորացում

Նոր «ապակյա առաստաղ» կանանց համար

Այս տարի հանրապետության 6 մարզերում՝ Սյունիքում, Տավուշում, Շիրակում, Արարատում, Լոռիում և Վայոց ձորում, խոշորացված համայնքների ընտրություններ են կայացել: Դրանք անցկացվել են փետրվարի 14-ին, սեպտեմբերի 18-ին և հոկտեմբերի 2-ին՝ միավորելով ընդհանուր թվով 125 համայնք 17 փնջերում: Բոլոր խոշորացված համայնքների ավագանիներում կանանց ներկայացվածության առումով զգալի նվազեցում արձանագրվեց:

Հոկտեմբերի 2-ին խոշորացված 6 համայնքում՝ Ամասիայում, Աշոցքում, Արփիում, Վայքում, Ջերմուկում, Զառիթափում, անցկացված ընտրությունների արդյունքում միավորվեց 47 համայնք: Կանանց ներկայացվածությունն ընտրված ավագանիների կազմում կրճատվեց երեք անգամ՝ մինչև խոշորացումը 51 համայնքի ավագանիներում կանայք ընդհանուր թվով 15% էին կազմում, իսկ խոշորացումից հետո՝ 5%:

Սեպտեմբերի 18-ին 8 փնջում՝ Գորիսում, Մեղրիում, Գորայքում, Տեղում, Այրումում, Նոյեմբերյանում, Կողբում և Ուրցաձորում կայացած ընտրությունների արդյունքում միավորվեց 56 համայնք: Կանանց ներկայացվածությունը խոշորացված համայնքների ավագանիներում կիսով չափ նվազեց՝ 10%-ից խոշորացումից առաջ մինչև 5,5% խոշորացումից հետո:

Փետրվարի 14-ին երեք խոշորացված համայնքներում՝ Դիլիջանում, Տաթևում, Թումանյանում, անցկացված ՏԻՄ ընտրությունների արդյունքում միավորվել է 21 համայնք 3 փնջում: Ընտրված ավագանիների կազմում կանանց ներկայացվածությունը նվազել է երեք անգամ՝ մինչև խոշորացումը միավորված 21 համայնքի ավագանիներում կանայք 9,2% էին կազմում, իսկ խոշորացումից հետո՝ 2,8%:

***

Այսպիսով, համայնքների խոշորացման արդյունքում արձանագրվել է լուրջ հետընթաց կանանց ներկայացվածության առումով: Ինչպես վկայում են մեր զրույցները կանանց հետ, պատճառները տարբեր են՝ մրցակցությունն է անհամեմատ բարձր, հատկապես երբ գյուղական համայնքները միավորվում են քաղաքների շուրջ, կին թեկնածուների ճանաչելիությունը հարակից համայնքներում ցածր է, իսկ լայն քարոզարշավ ծավալելու հնարավորություններ կանայք, որպես կանոն, չունեն, բացի այդ, ընտրագրավի չափն է մեծանում, ինչը լուրջ խոչընդոտ է կանանց պարագայում: Հաշվի առնելով մարզերում միջհամայնքային ճանապարհների ու տրանսպորտի վիճակը, կանանց համար անհաղթահարելի պատնեշ է դառնում հեռավորությունը կենտրոնից, որի շուրջ միավորվում են համայնքները: Արդյունքում՝ խոշորացված համայնքների ընտրություններում կին թեկնածուների թիվը ի սկզբանե քիչ է եղել, իսկ ընտրված ավագանիների կազմում կանանց ներկայացվածությունը՝ 2-3 անգամ ցածր, քան մինչև խոշորացումը: Միակ բացառությունը Սյունիքի մարզի Տեղ համայնքն է. այսօր դա միակ խոշորացված համայնքն է, որի ավագանիում խոշորացումից հետո կանաց թիվն ավելացել է:

Իսկ, օրինակ՝ նույն մարզի Արփի համայնքում, որը 10 համայնք է միավորել, ավագանու կազմում 7 անդամ է, և միայն մեկն է կին: Մինչդեռ խոշորացումից առաջ այդ համայնքների ավագանիների կազմում եղել է 50 անդամ, այդ թվում՝ 17 կին: Նույն պատկերն է Տավուշի մարզի Այրումում, որը խոշորացվել է՝ իր մեջ ընդգրկելով 9 համայնք: Մինչև խոշորացումը նրանց ավագանիների կազմում 54 անդամներից 3-ն էին կանայք, այժմ Այրումում ընտրվել է ավագանու 11 անդամ, և նրանցից ոչ մեկը կին չէ: Այստեղ առաջադրված 36 թեկնածուներից 7-ն էին կանայք, նրանցից որևէ մեկը ավագանու անդամ ընտրվելու համար բավարար ձայներ չստացավ, թեպետ շատերը ավագանիում աշխատելու հաջողված փորձ ունեին: Բագրատաշեն համայնքի դպրոցի տնօրեն Լիանա Ալավերդյանը մեկն է այդ կանանցից, նրան ընդամենը 4 ձայն չբավականացրեց ավագանու անդամ ընտրվելու համար: Նրա համոզմամբ՝ կնոջ արագ կողմնորոշվելու, ճիշտ և արդար որոշումներ կայացնելու ունակությունը անհրաժեշտություն է համայնքի կառավարման գործում: Պակաս կարևոր չէ կրթական մակարդակը:

- Ես հերթական անգամ համոզվեցի, որ ընտրությունները անցնում են ոչ թե թեկնածուների որակական չափանիշների ներքո, այլ խնամի-ծանոթ-բարեկամ սկզբունքով, որը շատ ցավալի է: Ես կարծում եմ՝ պետք է լինեն որոշակի չափորոշիչներ, որոշակի պահանջներ, ի վերջո, ավագանի կամ գյուղապետ լինելը էդքան էլ հեշտ գործ չի, մատների արանքով չի կարելի նայել: Մարդն առնվազն պետք է ունենա բարձրագույն կրթություն: Եթե ավագանին բյուջե է քննարկելու կամ հավանություն է տալու գյուղապետի կազմած նախահաշվին, նա պետք է գաղափար ունենա գոնե այդ նախահաշվից,- կարծում է Լիանա Ալավերդյանը:

Կանանց թիվը խոշորացված Նոյեմբերյանի ավագանու կազմում նույնպես ավելի քիչ է, քան մինչև խոշորացումը: Նոյեմբերյանը խոշորացվել է՝ իր մեջ ընդգրկելով ևս 7 համայնք: Ավագանու կազմում 15 անդամ է, որոնցից մեկն է կին, թեև մինչ այդ միավորված համայնքներն ունեցել են ավագանու 44 անդամ, որոնցից 5-ը կանայք էին: Այստեղ առաջադրված 5 կանանցից միայն «Մասիս տոբակո» ընկերության գործակալ Էմմա Հակոբյանը խիստ մրցակցության արդյունքում կարողացավ անհրաժեշտ թվով ձայներ ստանալ և ավագանու անդամ դառնալ:

- Ուզում եմ օգտակար լինել ոչ միայն իմ համայնքի բնակիչներին, այլ նաև բոլոր 9 համայնքների ազգաբնակչությանը,- ասում է Էմմա Հակոբյանը, ով երկար տարիներ Տավուշի մարզի Ոսկեվան համայնքի ղեկավար է եղել:

> «Խոշորացված համայնքների ընտրություններում կանայք միայն Ամասիայում են հաղթել որպես համայնքի ղեկավար: Այստեղ թեժ պայքարի արդյունքում ընտրվել է անկուսակցական Զեմմա Հարությունյանը, ով Կադաստրի պետական կոմիտեի Ամասիայի մասնաճյուղի օպերատոր է: Նրա մրցակիցն էր Արեգնադեմի գյուղապետ Աղունիկ Հազրյանը, ով երկար տարիներ լավագույն ղեկավարներից մեկն էր համարվում հանրապետությունում:»

Կոթի համայնքը խոշորացող համայնքներից մեկն է, որը միավորվել է Նոյեմբերյան համայնքին: Կոթիի նախկին ավագանիներից 11-ից 2-ը կանայք են եղել՝ ուսուցչուհիներ Անահիտ Բեջանյանը և Անահիտ Խաչատրյանը, ովքեր բավականին ակտիվ աշխատել են ի նպաստ իրենց համայնքի: Այս անգամ, սակայն, ավագանու ընտրություններին նրանց չմասնակցելը կապված էր համայնքի խոշորացման հետ:

- Այլևս չէի կարող թեկնածություն առաջադրել, ի վիճակի չեմ տանը թոռնիկներին թողնել և կրակի բերանով հասնել Նոյեմբերյան, որը մեր գյուղից մոտ 30 կմ հեռու է: Միաժամանակ նաև մանկավարժ լինելով՝ չեմ կարող բազմաթիվ անգամ դասերից բացակայել, որ մեկնեմ Նոյեմբերյան՝ ավագանու նիստերին մասնակցելու, դա անհնարին է: Եթե խոշորացումը չլիներ, կարող էի իմ թեկնածությունը դնել, որովհետև տեղում էի լինելու, անկախ նրանից, թե ինչ դժվարություններ կային, գյուղում լինելով կարողանում էի ամեն ինչի համար ժամանակ գտնել,- ասում է Անահիտ Խաչատրյանը, ով Կոթի համայնքի միջնակարգ դպրոցի դասվար է աշխատում: Նույն պատճառներն է նշում նաև Անահիտ Բեջանյանը:

Կանանց ներկայացվածությունը նվազել է նաև փետրվարի 14-ին խոշորացված Դիլիջանում անցկացված ընտրություններից հետո: Մինչև խոշորացումը Դիլիջանում և նրա շուրջը 6 միավորված համայնքներում ավագանու անդամների ընդհանուր թիվը եղել է 51, որոնցից 4-ը՝ կին: Ընտրություններից հետո Դիլիջանի ավագանու անդամների թիվը 15 է, և ոչ մի կին:

Հովքն այն 6 համայնքներից է, որոնք փետրվարի 14-ին կայացած ընտրությունների արդյունքում միավորվել են Դիլիջանին: Հովքում շատ ակտիվ կանայք կան, ովքեր պատրաստ են նաև մասնակցելու իրենց համայնքի ղեկավարմանը: Սակայն նրանք չեն էլ առաջադրվել խոշորացված ընտրություններում: Նրանցից մեկը Օքսֆամի աջակցությամբ հիմնադրված կանանց գյուղատնտեսական կոոպերատիվի նախագահ Ալվարդ Չատյանն է, ով համարում է, որ ավագանու կազմում պետք է պարտադիր կանայք լինեն: Այնուամենայնիվ, այս տարի չի առաջադրել իր թեկնածությունը, թեև մինչ խոշորացումը պատրաստվում էր դա անել:

- Որովհետև արդեն ուշ էր, բացի այդ, շատ թեկնածուներ կային հենց Դիլիջանից, մենք նույնիսկ չգիտեինք՝ ովքեր էին, հետո իմացանք, որ տեղերն արդեն լրացված են,- ասում է նա:

Խոշորացումից հետո խնդիրներով հարուստ այս համայնքում մինչ օրս ոչինչ չի փոխվել, և կանայք համարում են, որ իրենց ձայնը խոշորացված Դիլիջանում լսելի չէ:

- Գյուղում շատ խնդիրներ ունենք՝ մեր ճանապարհների հարցը, տրանսպորտի հարցը, մեր երեխեքի հարցը, մանկապարտեզ մի հատ չունենք, բուժկետ չունենք, մեծ գյուղ է, շատ ընտանիքներ կան, մի երեխա հիվանդանալու համար պիտի տաքսի բռնեն, գնան հասնեն Իջևան կամ Դիլիջան, պատկերացնո՞ւմ եք՝ էդ ինչ ա գյուղի համար: Այսքան երեխեք կան մի գյուղում, 23 երեխա է այս տարվա մեջ ծնվել: Այս հարցերի մասին ո՞վ պիտի մտածի: Քաղաքապետը, որ եկավ, ճիշտն ասած, այդ հարցը դրեցինք, ասեցինք, որ մանկապարտեզ չունենք, բուժկետ չունենք, տրանսպորտ չունենք: Դե, մեզ խոսք են տվել, որ կանեն, կօգնեն, բայց մինչ օրս ոչ մի բան չկա, ոչ մի բան չի առաջադիմել,- պատմում է Ալվարդ Չատյանը, նկատելով, որ ընտրություններից արդեն 9 ամիս է անցել:

Խոշորացման գաղափարը միտված է համայնքների բարեկեցությանը, նոր ծրագրերի իրականացմանը, փոքր համայնքների խնդիրների արդյունավետ լուծմանը: Սակայն այն փաստը, որ կանանց մասնակցությունը ավագանիների կազմում ակնհայտորեն նվազում է, կարող է հարցականի տակ դնել այն դրական ակնկալիքները, որոնք դրված են խոշորացման գործընթացի հիմքում: Անհրաժեշտ է նոր մեխանիզմներ մտածել, որոնք թույլ կտան ներգրավել ակտիվ կանանց ներուժը իրենց իսկ համայնքներին վերաբերող որոշումների ընդունմանը:

Կարևորը մասնակցությունն է

Ընտրություններում բազմաթիվ արժանի կանայք պարտություն կրեցին: Հիմնականում պարտություններն արձանագրվեցին այնտեղ, որտեղ ընտրապայքարն առավել քան թեժ էր՝ խոշորացված համայնքներում, մարզային քաղաքներում և հատկապես համայնքի ղեկավարի թեկնածուների մրցավազքում: Սակայն բոլոր այդ կանանց միավորում է պարտությունից չընկճվելու, իրենց նպատակներից հետ չկանգնելու ունակությունը...

Իրինա Յոլյան. «Ամեն ինչ դեռ առջևում է...»

Սեպտեմբերի 18-ին Գորիսում կայացած ՏԻՄ ընտրություններից հետո Գորիս համայնքը միավորում է 12 բնակավայր: Ավագանու նախկին 62 անդամների փոխարեն ձևավորվել է 15 հոգուց բաղկացած կազմ: Այստեղ որպես ավագանու անդամ առաջադրված 26 թեկնածուներից միայն մեկն էր կին՝ լրագրող, Գորիսի կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի անդամ Իրինա Յոլյանը:

«Նպատակ ունեմ օգտակար լինել իմ համայնքին, որակական փոփոխություններ կատարել ավագանու գործունեության մեջ: Ուզում եմ սեփական օրինակով ցույց տալ, որ ավագանու անդամը քաղաքացու բողոքը, խնդիրները լսող պատրաստակամ անձ է, ով պատրաստ է հետևողականություն ցուցաբերել դրանց լուծում տալու համար»,- այս ուղերձով էր մտել ընտրապայքարի մեջ Իրինա Յոլյանը, ով սակայն պարտվեց ընտրություններում:

«Հարյուրավոր զանգեր ու հաղորդագրություններ եմ ստանում, երեկ շատ ուշ իմացա, որ անհրաժեշտ քվեներ չեմ ստացել: Գորիս քաղաքում իմ ստացած ձայները բավարար էին, խնդիրը գյուղական համայնքների հետ էր կապված, առավել ևս, որ գիտեմ, որոշ գյուղերում հստակ հանձնարարական էր տրված եղել՝ աշխատել համապատասխան անձանց օգտին, ու քանի որ մեր կողմերում հանձնարարություն չկատարելը շատերի համար հավասարազոր է ինքնասպանության, հետևաբար ըմբռնումով եմ մոտենում: Բայց Գորիսում իմ ստացած քվեները հույս են տալիս, որ մարդկանց գիտակցության մեջ շատ բան է փոխվել... Ինչ վերաբերում է իմ այն տեսակետին, որ խոշորացող քաղաքային համայնքներում կանայք շանս չունեն, իրապես այդպես է: Այս ընտրությունները ևս մեկ անգամ ապացուցեցին, որ կանանց համար հնարավորությունները գրեթե զրոյական են, քանի որ այն լծակները, ուղղորդող, վերահսկող վիճակները, որ ստեղծվում են, կանանց համար անընդունելի և անհնարին են: Հատկապես եթե սկզբունքային ես, ունես քո սեփական կարծիքը, դեմ ես ընդհանուր հոսանքին, ուրեմն ամեն ինչ կարվի, որ ներսում չլինես: Պետք է հատուկ շնորհակալ լինեմ ինձ վստահողներին, մարդկանց, ովքեր ինձ հետ էին, իմ կողքին էին: Ամեն ինչ դեռ առջևում է...», - գրեց Իրինան իր ֆեյսբուքյան էջում ընտրություններից հետո:

Սրբուհի Գրիգորյան. «Դեպի փոփոխություններ» կարգախոսը մնում է ուժի մեջ»

Սիսիանի քաղաքապետի թեկնածու Սրբուհի Գրիգորյանը ընտրություններում հանդես էր գալիս «Դեպի փոփոխություններ» կարգախոսով: Լրագրող, ավագանու անդամ, Սիսիանի Կանանց ռեսուրս կենտրոնի գործադիր տնօրեն Սրբուհի Գրիգորյանը «Լուսավոր Հայաստան» կուսակցության տեղի գրասենյակի ղեկավարն է, առաջին անգամ էր առաջադրվում որպես համայնքի ղեկավարի թեկնածու:

Ի պատասխան իր մրցակիցներին, ովքեր ասում էին՝ խելացի է, բայց ուժեղ չի, հակադարձում էր. «Ուժը ո՞րն է, ես բոքսի ռինգ չեմ գնում, որ այնտեղ բազկի ուժ ցուցադրեմ: Ցանկացած համայնքի ղեկավարի ուժն իր ինտելեկտուալ կարողություններն ու դիվանագիտական հմտություններն են, և այս առումով ես, անշուշտ, կարող եմ մրցակցել...»

Ընտրություններից հետո, դիմելով իր ընտրագրավի համար անհրաժեշտ գումար հավաքելու նպատակով նվիրատվություններ կատարած հայրենակիցներին, տեղեկացրեց, որ պարտվել է, սակայն իր թիմի խոստումը՝ այդ գումարի չափով դասընթացներ կազմակերպել քաղաքականության ոլորտում իրենց քայլերը կատարող կանանց համար, պահելու են: «Մենք դա կանենք հասարակական հիմունքով, անհրաժեշտ ծախսերը կվերցնեմ ինձ վրա: Հաջորդ տարի Սիսիանում, համայնքների խոշորացման հետ կապված, դարձյալ ՏԻՄ ընտրություններ են: Մեր տեսակը նահանջել չգիտի: Մենք շարունակելու ենք երկրում փոփոխություններին ուղղված մեր քայլերը: Շարունակելու ենք, որովհետև սիրում ենք մեր երկիրը մեր անձերից առավել: «Դեպի փոփոխություններ» կարգախոսը մնում է ուժի մեջ...»,- հայտարարեց նա:

Մասնակցության բանաձեւ

Ընտրությունների են գնում միշտ երիտասարդ տատիկները

ՏԻՄ ընտրություններում տարբեր տարիքի կանայք են առաջադրվում, սակայն, ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, ակնհայտորեն ակտիվ են, մի կողմից, փորձով ու գիտելիքներով հարուստ կանայք, ովքեր երկար տարիների իրենց ակտիվ հասարակական գործունեությամբ հարգված ու ճանաչված են իրենց համայնքներում, մյուս կողմից՝ երիտասարդ աղջիկները, ովքեր ծնվել ու մեծացել են անկախ Հայաստանում, լավ կրթություն ստացել ու իրենց հետ փոփոխությունների նոր շունչ են բերում: Ո՞ւմ է ավելի շատ հակված վստահել ընտրողը՝ դժվար է ասել, բայց երևի թե տարիների ընթացքում կուտակված փորձի ու երիտասարդական մաքսիմալիզմի հավասարակշռությունն է, որ կարող են ապահովել ավագանու կայացումն ու արդյունավետ աշխատանքը: Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու անդամ Թերեզա Գաբրիելյանին ու Նոր Գեղի համայնքից չորրորդ անգամ հաղթանակ տարած ավագանու անդամ Նաթելա Շմավոնյանին միավորում է ոչ միայն իրենց, այլև բոլոր թոռնիկների համար ավելի լավ ապագա ունենալու ձգտումը:

Նաթելա Շմավոնյան.
«Ընտրողը գիտի, որ խոսքս գետնով չեմ տա»

Նոր Գեղիում ավագանու 10 անդամներից չորսը կանայք են: Նրանցից մեկը չորրորդ անգամ ավագանու անդամ դարձած Նաթելա Շմավոնյանն է: Տարիներ շարունակ ավագանիում աշխատելով՝ նա սեփական օրինակով ապացուցում է, որ համայնքի հոգսերը թեթևացնելու համար հասուն տարիքը խնդիր չէ: Ամուսինն ու երկու զավակները տիկին Նաթելայի հաստատակամ կամքին հակառակվել չեն փորձում, գտնելով, որ «բարի գործի դեմը չեն առնում»:

- Մարդիկ իրենց ձայնը հենց այնպես չեն տալիս ինձ,- ասում է տիկին Նաթելան,- ինձ ճանաչում ու հարգում են: Իմ ընտրողը գիտի, որ խոսքս գետնով չեմ տա, ու իր վստահության քվեն տալիս է ինձ: Ես էլ աշխատել եմ հուսախաբ չանել նրանց: Կարծում եմ, տարիների ընթացքում պետք է լավ աշխատել՝ ապացուցելու համար, որ մարդկանց ընտրությունը ճիշտ էր,- ասում է նա:

Երկար տարիներ աշխատել է մանկապարտեզի դաստիարակչուհի, ապա՝ տնօրեն, քանզի գտնում էր, որ մատաղ սերնդի դաստիարակությունից են կախված վաղվա քաղաքացու դիմագիծն ու ճակատագիրը: Հենց այդ տարիներից նրա հանդեպ ձևավորված հարգանքն ու վստահությունը հող նախապատրաստեցին համայնքային խնդիրների լուծմանը մասնակից լինելու որոշման համար: Իսկ համայնքային խնդիրներին մոտիկից ծանոթանալուն նպաստեց գյուղապետարանի ֆինանսական բաժնում հաշվապահ աշխատելը:

- 2004 թվականից աշխատում եմ «Նաիրի» ջուրօգտագործողների ընկերությունում որպես հաշվապահ և այդ տարին էլ որոշեցի առաջադրվել ավագանու թեկնածու: Դեռ խորհրդային տարիներին եղել եմ կոմերիտական ակտիվիստ, համոզված էի, որ հասարակական գործունեության հանդեպ սերը պահպանվել է իմ մեջ, ու որոշեցի փորձել, փորձեցի ու հաղթեցի այդ ընտրություններում: Այն տարիներին կին թեկնածուի հանդեպ թերահավատ էին, բայց երբ տեսան, որ կազմակերպչական գործերից հասկանում եմ, համակերպվեցին և ականջալուր էին իմ ելույթներին,- պատմում է տիկին Նաթելան, նկատելով, որ այն փաստը, որ այսօր ավագանիում չորս կին է ընդգրկված նշանակում է, որ համայնքը համոզվել է. կանանց ներկայությունը համայնքի կառավարման գործում ոչ միայն ցանկալի, այլև անհրաժեշտ է: Մոր սրտացավությամբ տիկին Նաթելան հավասարապես մտածում ու փորձում է լուծել գյուղի անապահով ընտանիքների սոցիալական, մանկապարտեզի վերանորոգման ու տրանսպորտի խնդիրները:

- Ես ցանկանում եմ, որ ոչ միայն իմ հինգ թոռնիկները, այլև Նոր Գեղիի բոլոր մանուկները ապրեն լուսավոր համայնքում, վազվզեն մաքուր ու լուսավոր փողոցներով, չիմանան՝ ի՛նչ բան է քաղցը, այլապես էլ ինչի՞ համար ենք ապրում մեծերս,- ասում է տիկին Նաթելան:

Նա իր ակտիվությամբ վարակել է նաև մանկավարժ հարսին և խրախուսում է հասարակական ու քաղաքական գործունեությամբ զբաղվելու վերջինիս ցանկությունը: Դեռ ավելին, տիկին Նաթելան ինքն է պարտադրում, որ հարսը մասնակցի համայնքում կազմակերպվող քննարկումներին ու դասընթացներին: Ասում է. «գրագետ ու ակտիվ աղջիկ է, ինչո՞ւ նստի տանը, թող աշխատի, շփվի մարդկանց հետ, օգտակար լինի նրանց»:

Թերեզա Գաբրիելյան.
«Ի տարբերություն մյուս տատիկների, ես ձգտում եմ զբաղվել նաև հանրօգուտ աշխատանքով»

Կոտայքի մարզի Գառնի համայնքի միակ կին ավագանու անդամ Թերեզա Գաբրիելյանն անթաքույց հպարտությամբ է նշում, որ 4 զավակների մայր և 10 թոռների տատ լինելով հանդերձ շարունակում է իր ուժը, եռանդն ու ժամանակը ներդնել հարազատ համայնքի զարգացման գործում:

Առաջին անգամ ավագանու թեկնածու էր առաջադրվել 2004-ին, սակայն չէր ընտրվել, քանի որ չուներ ո՛չ փորձ և ո՛չ էլ վստահված անձ: Սակայն չէր հուսահատվել: Մշտապես տեղեկացված է եղել համայնքային խնդիրներին, համայնքին օգտակար լինելու մղումով փորձել է աջակցել հարևան-բարեկամներին, բոլոր նրանց, ովքեր օգնության կարիք են ունեցել: Համայնքի բնակչությունը սիրում ու գնահատում էր նրա նվիրվածությունը, ուստի հաջորդ ՏԻՄ ընտրություններում նրան ընտրում է որպես ավագանու անդամ: Այս անգամ էլ նա գառնեցիների վստահության քվեն ստացավ, թեպետ 23 մրցակից ուներ, այդ թվում՝ մեկ կին:

- Առանց ամուսնու (նա մահացել է) ճիշտ է, դժվար է, սակայն հոգսս ծանր չէ, քանի որ երեխաներս մեծացել են, ամեն մեկն իր ընտանիքն ունի, ինձ մնում է զբաղվել թոռնիկներով: Բայց, ի տարբերություն մյուս տատիկների, ես ձգտում եմ զբաղվել նաև հանրօգուտ աշխատանքով, մի լավ բան անել համայնքի համար,- ասում է Թերեզան:

Աշխատանքի բերումով նա առնչվում է համայնքի բոլոր բնակիչների հետ, քանի որ բոլորն էլ այս կամ այն առիթով ունենում են անձնագրային խնդիրներ: Սիրով ընդառաջում է Փարոս համակարգի անդամ անապահով ընտանիքներին, դիմում է համայնքի ղեկավարին այդ ընտանիքների երեխաներին գրենական պարագաներով ու դպրոցական համազգեստով ապահովելու խնդրանքով: Նրա հորդորով համայնքի ղեկավարը համայնքի՝ զորակոչման ենթակա տղաներին ԴՕՍԱԱՖ-ի դպրոց գնալու համար ապահովել է անվճար տրանսպորտով, համատեղ ուժերով լուծվել է նաև խմելու և ոռոգման ջրի հարցը, վերանորոգվել են դպրոցն ու մանկապարտեզը:

- Ավագանու նիստերին ներկայացված հարցերին նախապես ծանոթանում եմ, երբեմն առարկելու կամ այլ տարբերակ առաջարկելու անհրաժեշտություն է առաջանում, նման դեպքերում իմ

կարծիքը հաշվի են առնում: 11 տղամարդ ավագանիների թվում միակ կին ավագանին եմ, ուստի հարգում են ինձ,- ասում է Թերեզան:

Նրա խոսքով՝ համագյուղացի կանայք երբեմն փորձել են իրեն հետ պահել հանրային աշխատանքից, ասելով, թե կին ես, քո գործով զբաղվիր, տղամարդիկ գիտեն իրենց անելիքը: Սակայն Թերեզան այլ կերպ է մտածում: «Ավագանիների շարքում կանանց ներկայությունը ոչ միայն հնարավոր է, այլև անհրաժեշտ: Ի վերջո, ժամանակն է խախտելու հայրիշխանության ավանդույթը քաղաքականության մեջ և ընտրովի մարմիններում: Ու մի բան էլ. ես վստահ եմ՝ կինը կարող է շատ բան փոխել համայնքի կառավարման գործընթացում»,- եզրակացնում է Թերեզա Գաբրիելյանը:

Զայն բազմաց

ՏԻՄ-երի աշխատանքից բավարարված է հայաստանցիների տասից մեկը

Այս մասին են փաստում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը 2016» զեկույցի տվյալները:

Հարցման մասնակիցներն ավելի շատ գոհ են եղել ՏԻՄ-երի՝ համայնքները մաքուր պահելու, ավելի քիչ՝ շրջակա միջավայրը և բնական ռեսուրսները պահպանելու, առողջապահության չափորոշիչների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և տեղական ճանապարհները և կամուրջները պահպանելու աշխատանքներից:

Իրենց համայնքների ղեկավարներին անվերապահորեն վստահել է հարցվածների մեկ երրորդից ավելին՝ 38,1 տոկոսը, ավագանու անդամներին՝ մոտ մեկ քառորդը՝ 24,4 տոկոսը: ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության մակարդակը բարձր է գնահատել հարցվածների միայն 13 տոկոսը: Մասնավորապես, հարցվածները դժգոհ են եղել ՏԻՄ-երի ֆինանսական գործունեության և որոշումների կայացման թափանցիկությունից:

Հարցված հայաստանցիների մեծ մասը՝ 58,6 տոկոսը, համոզված է եղել, որ ՏԻՄ-երում կարելի է որևէ խնդիր լուծել կաշառքի, իսկ 79,6 տոկոսը՝ կապերի միջոցով: Հարցմանը նախորդող վեց ամիսների ընթացքում հարցված հայաստանցիների միայն 16,5 տոկոսն է դիմել իր ՏԻՄ-երին՝ որևէ խնդիր լուծելու նպատակով:

Համայնքների բնակիչները, որպես կանոն, չեն մասնակցել ՏԻՄ-երի աշխատանքներին: Հարցմանը նախորդող վեց ամիսների ընթացքում իր համայնքի ավագանու նիստերին մասնակցել է հարցվածների միայն 2,4 տոկոսը, համայնքի բյուջեի վերաբերյալ քննարկումներին՝ 1,7 տոկոսը:

Հարցման մասնակիցների գերակշիռ մասը անհաղորդ է եղել տեղական ինքնակառավարման մարմինների ընդունած որոշումներին: Հարցվածների 13,4 տոկոսն է հայտնել, որ ծանոթ է իր ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումներին: Հարցվածների 91 տոկոսը չի իմացել իր համայնքի 2015 թ. բյուջեի չափը:

Հարցվածների գերակշիռ մասը տեղյակ չի եղել տեղական ինքնակառավարմանը վերաբերող հայաստանյան օրենսդրությանը: Հարցվածների 90,2 տոկոսը տեղյակ չի եղել Հայաստանում կառավարման ապակենտրոնացման գործընթացին: Հարցվածների մեծ մասը՝ 58,9 տոկոսը, չի իմացել նաև համայնքների խոշորացման գործընթացի մասին: Այդուհանդերձ, նրանց մասնակցությունը ՏԻՄ ընտրություններում բավականին բարձր է եղել: Հարցմանը նախորդող վերջին ընտրություններին մասնակցել է հարցվածների երեք քառորդը:

Հարցադրում

Կանայք ավելի շա՞տ են դիմում ինքնաբացարկի

Ինքնաբացարկի ինստիտուտը կանանց մասով աշխատել է հիմնականում համայնքի ղեկավար առաջադրված թեկնածուների դեպքում: ԿԸՀ տվյալներով՝ սեպտեմբերի 18-ին և հոկտեմբերի 2-ին կայացած ընտրություններում որպես համայնքի ղեկավար ի սկզբանե առաջադրվել է 59 կին, ինքնաբացարկներից հետո մնացել են 26-ը, ընտրվել՝ միայն 9-ը: Ընդ որում՝ ընտրված կանանցից 7-ը վերընտրվել են:

Դիտարկումները ցույց են տալիս, որ կանայք ավելի շատ են դիմում ինքնաբացարկի: Այսպես, սեպտեմբերի 18-ին ընտրություններում որպես համայնքի ղեկավարի թեկնածու գրանցված 548 քաղաքացիներից 140-ը ներկայացրել են ինքնաբացարկի դիմում, այսինքն՝ մեկ քառորդը, ընդ որում, համայնքի ղեկավար առաջադրված 21 կանանցից ինքնաբացարկ են հայտնել 11-ը, այսինքն՝ կեսը:

Ի դեպ, ինքնաբացարկների արդյունքում համայնքի ղեկավար ընտրող 237 համայնքներից 125-ում քվեարկվել է մեկ թեկնածու, այսինքն՝ ակնհայտ է, որ ինքնաբացարկի դիմած քաղաքացիներից առնվազն 125-ը ի սկզբանե «ոչ ռեալ» թեկնածուներ էին, ովքեր առաջադրվել էին իրենց բարեկամի կամ վերադասի գրանցումն ապահովելու նպատակով, քանի որ օրենքն արգելում է մեկ թեկնածուով ընտրությունները: Ի դեպ, ինքնաբացարկ հայտնած կին թեկնածուները հիմնականում գյուղապետարանների և համայնքային կառույցների շարքային աշխատողներ են եղել: Նման դեպքերն անշուշտ չեն նպաստում կանանց առանց այդ էլ ցածր քաղաքական վարկանիշի բարձրացմանը՝ հանրային կարծիքում ևս մեկ անգամ ամրագրվելով, որ կանայք լուրջ մրցակից չեն, որ նրանք ղեկավարվող են, ինքնուրույն հանդես գալու և որոշումներ ընդունելու ունակ չեն: Ճիշտ են ասում, որ կանայք, մտնելով քաղաքականության մեջ, սկսում են պատասխանատվություն կրել ոչ միայն իրենց սեփական արարքների համար, ինչպես դա տեղի է ունենում տղամարդկանց դեպքում, այլև իրենց ողջ սեռի:

Նշենք, որ ավագանու թեկնածուների դեպքում ինքնաբացարկի դիմած կանանց և տղամարդկանց համամասնությունը գրեթե նույնն էր:

Համարի վրա աշխատել են՝

Լիա Խոջոյանը,
Լալա Տեր-Ղազարյանը,
Մարիաննա Ղահրամանյանը,
Անուշ Ներսիսյանը, Արմինե Գևորգյանը

Այս համարը պատրաստվել է
ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ՝ Գերմանիայի Դաշնության ֆինանսավորմամբ:

Համարը տպագրվել է
Օքսֆամ և «ՕքսԵՋԵՆ» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի աջակցությամբ «ՀԱՎԱՍԱՐ» քարոզարշավի շրջանակներում:

Գլխավոր խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
էլ. հասցե՝ womennetam@gmail.com